Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն
ԱԲ ավագ դպրոցի ընդունելության քննություններ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Քննաշրջան՝ **2018 թ., ապրիլ**
Տևողություն՝ **1 ժամ 15 րոպե**

«Այբ» ավագ դպրոց

Հավելյալ նյութ՝ *Պատասխանների գրքույկ*

ՈՒՇԱԴԻՐ ԿԱՐԴԱԼ ԱՅՍ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ

Անհրաժեշտ է հետևել *Պատասխանների գրքույկի* կազմին գրված ցուցումներին:
Գրել մուգ կապույտ կամ սև գրիչով:
Պետք է պատասխանել **բոլոր** հարցերին:
Քննության վերջում բոլոր թղթերը հավաքել և հանձնել մեկ տրցակով:

Յուրաքանչյուր հարցի հնարավոր առավելագույն միավորը նշված է հարցի վերջում՝ աջ կողմում:
Հարցերի միավորների ընդհանուր քանակը **32** է:

Այս փաստաթուղթը բաղկացած է **4** տպագիր էջից:

©«Այբ» կրթական հիմնադրամ 2018
©Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն 2018

Սիրելի՛ դիմորդ, ստորև ներկայացված են միջնադարյան երկու հայրեն: Կարդա՛ դրանք և պատասխանի՛ր հարցերին:

Սրտիկս է եղեր ղալամ[1], բաժնելու թղթեր կու գրե.
Կանչեմ, ո՛հ, իմ Աստված, զամենայն ղարիպ դու պահե.
Ղարիպ[2] գնացած ունիմ, իմ տարտերս զիս կու լափե.
Շալլա[3] թե շուտով դառնա, թե չէ իմ հոգիս կու ելնե:

****

Լուսիկ բոլըրեր ու՝ եկեր,
«Ես ի քու խարիպտ[4] ի նման»:
Խպնէ՛ ու ամչնէ՛, լուսի՛կ,
Ո՞ր տեղտ իմ խարիպիս նման,
Խարիպս թուխ աչք ունէր,
Թուխ յուներ ու շուշման բերան,
Թրթունք շուրթեղէն ունէր,
Սըռմաթել պեխերն ի վրեն:

1. Համեմատի՛ր վերը բերված երկու հայրենները.

ա. Ո՞րն է դրանց ընդհանուր մոտիվը: 1 միավոր

բ. Ո՞վ է դրանց քնարական հերոսը: 1 միավոր

գ. Ի՞նչ տեղեկություն կարելի է քաղել միջնադարում ապրող հայի ապրելակերպի, մտածողության ու հոգեբանության մասին: 1 միավոր

դ. Ի՞նչ արդիականություն ունեն այս հայրենները մերօրյա Հայաստանում: 2 միավոր

---

[1] Գրիչ
[2] Պանդուխտ
[3] Աստված տա:
[4] Տե՛ս ծնթ. 2:

©«Այբ» կրթական հիմնադրամ 2018
©Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն 2018

2. Դո՛ւրս գրիր մեկ փոխաբերության և մեկ անձնավորման օրինակ այս հայրեններից: 2 միավոր

3. Բնութագրի՛ր հայրենը:

ա. Ինչպիսի՞ կառուցվածք ունի այն, հիմնականում ինչպիսի՞ թեմաներ են ընդգրկում հայրենները: 2 միավոր

բ. «Հայրեն» եզրույթը մեկնաբանող ի՞նչ վարկած է ծանոթ քեզ: 2 միավոր

4. Պատմի՛ր Նահապետ Քուչակի մասին:

ա. Ո՞ր դարի հեղինակ է նա և որտե՞ղ է ծնվել: 2 միավոր

բ. Ի՞նչ վեճեր կան հայ գրականագիտության մեջ նրա անձի ու ստեղծագործության շուրջ: 3 միավոր

Սիրելի՛ դիմորդ, ստորև ներկայացվող հատվածը Մուրացանի «Հասարակաց որդեգիրը» պատմվածքից է: Կարդա՛ այն և պատասխանի՛ր հարցերին:

Գևորգը երկար նայում էր հարուստ մարդիկների ուրախությանը և ինքն իրեն շշնջում էր. «Ահա՛ ինչ կնշանակե հարուստ լինել, շատ փող ունենալ: Եվ ես հարյուր տարի էլ եթե ապրեի այսուհետև, դարձյալ Սոմարյանցի դահլիճի ներսը ոտք դնել չէի կարող: Ախր ի՞նչ մարդիկներ ենք մենք, չէ որ աստված մեզ ստեղծել է միայն բախտավոր հարուստներին ծառայելու համար: Ես և Սոմարյանցի տղան միասին էինք կարդում, ես նորանից ավելի լավ էի կարդում և նորանից ավելի շուտ ավարտեցի: Բայց որովհետև աղքատ էի, ես գնացի դարբին Գուստավի մոտ արհեստ սովորելու, իսկ նա մտավ գիմնազիոն, այժմ էլ նա ուրախանում է յուր հարուստ հոր հյուրերի հետ: Իսկ ես, իբրև մշակ, մի վերստ հեռավորությունից շալակել բերել եմ նրանց վանդակները: Իհարկե, Շառլոտայի նման գեղեցիկ աղջիկները Սոմարյանցի տղին կսիրեին, իսկ ինձ վրա կծիծաղեին, շատ բնական է...»: Այսպես խոսելով նա մոտեցավ սանդուղքի լուսավորված մուտքին և հնչակը քաշեց: Իսկույն երևեցավ ֆրակով և սպիտակ փողպատով մի սպասավոր: Գևորգը նորան հայտնեց, որ Գուստավի գործարանից բերել է յուր տիրոջ պատվիրած վանդակները և խնդրում էր, որ կարգադրեն ծառաներին ներս տանելու:

©«Այբ» կրթական հիմնադրամ 2018
©Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն 2018

1. Ըստ այս հատվածի՝

ա. ի՞նչ փոխազդեցություն ունեն կրթական ու սոցիալական ոլորտները միմյանց վրա; 3 միավոր

բ. կարելի՞ է արդյոք զուգահեռներ անցկացնել այսօրվա հայաստանյան կրթական համակարգի խնդիրների ու վերը նկարագրվածի միջև: 3 միավոր

2. Պատմվածքի գլխավոր հերոսը՝ Գևորգը, կորցնում է իր աշխատանքը գործարանում: Պատկերացրե՛ք՝ հանդիպել եք Գևորգին և հարցազրույց եք անում նրա հետ: Կառուցե՛ք հարցազրույցն այնպես, որ նա իր անձնական պատմության միջոցով ներկայացնի նաև իր ժամանակն ու միջավայրը: 6 միավոր

3. Ըստ այս պատմվածքի՝ ի՞նչ վերաբերմունք ունի Մուրացանը իր ժամանակաշրջանի հայ հասարակության վերնախավի նկատմամբ : 4 միավոր

Պատասխաններ

Հայրեններ

Պատասխաններ

1.

ա. Այս երկու հայրեններում էլ կա պանդխտության մոտիվը:

բ. Այս հայրենների քնարական հերոսը իր պանդուխտ սիրելիին սպասողն (կինն) է:

գ. Այս հայրեններից կարելի է ենթադրել, որ հայ տղամարդը հաճախ ստիպված էր լինում գնալ պանդխտության: Նրան սիրող կնոջ համար սպասումը ծանր էր: Այդ սպասումի նկարագրությունից կարելի է նաև հասկանալ, որ ուժեղ է կրոնի ազդեցությունը մարդկանց մտածողության վրա:

դ. Ազատ պատասխան:

2.

Փոխաբերություն

Սրտիկս է եղեր ղալամ[5], բաժնելու թղթեր կու գրե.
(Կա նաև այլ պատասխան:)

[5] Գրիչ

©«Այբ» կրթական հիմնադրամ 2018

©Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն 2018

Անձնավորում

Լուսիկ բոլորեր ու՝եկեր,

«Ես ի քու խարիպտ[6] ի նման»:

(Կա նաև այլ պատասխան:)

3.

ա. Հայրենը փոքրածավալ ստեղծագործություն է, որ հիմնականում բաղկացած է չորս տողից, յուրաքանչյուրը՝ 14-16 վանկանի: Իր բնույթով հայրենը նման է քառյակին: Բայց հայրենները կարող են ունենալ նաև տողաքանակի տատանումներ երկուսից մինչև ութ տողի սահմաններում: Հայրեններում հիմնականում արծարծվում են սիրային, իմաստասիրական, բարոյախրատական, պանդխտության թեմաներ:
բ. «Հայրեն» եզրույթը բացատրող տարբեր վարկածներ կան: Դրանցից մեկն այն է, «հայրեն»-ն առաջացել է «հայերեն» բառի սղումից: Եզրույթը բացատրվում է հայերեն ասել, հայոց լեզվով ասել, երգել իմաստով:

4.

ա. Նահապետ Քուչակը 16-րդ դարի հեղինակ է, ծնվել է Վանի Խառակոնիս գյուղում:
բ. Քուչակի մասին քիչ բան է պահպանվել: Հայ գրականագիտության մեջ պարբերաբար քննարկվում է նրա՝ հայրենների հեղինակ լինել-չլինելու հանգամանքը: Մանուկ Աբեղյանը ասում է, որ հայտնի ձեռագրերից ոչ մեկը չի նշում Նահապետ Քուչակի անունը, ուստի ավելի հավանական է որ նա ոչ թե հորինող, այլ ժողովրդական երգերից առած կտորների ժողովող է եղել:

Մուրացան «Հասարակաց որդեգիրը»

Պատասխաններ

1.

ա. Ըստ այս հատվածի՝ հասկանալի է, որ տվյալ միջավայրում կրթությունը հասանելի չէ բոլորին: Մարդու սոցիալական վիճակով, այլ ոչ թե կարողություններով ու նախընտրությամբ է պայմանավորված նրա մասնագիտական ընտրությունը: Կրթական համակարգը, լինելով վճարովի, ծառայում է սոցիալական անհավասարության պահպանմանը: Աղքատը չի կարող կրթության, մասնագիտության միջոցով փոխել իր սոցիալական դրությունը. նա միշտ կախման մեջ է մնում հարուստից:

բ. Ազատ պատասխան

[6] Տե՛ս ծնթ. 2:

©«Այբ» կրթական հիմնադրամ 2018
©Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն 2018

2. Ազատ պատասխան

3. Մուրացանը դատապարտում է իր ժամանակաշրջանի հայ վերնախավին, որ միայն խոստումներ է տալիս, այլ ոչ թե իրական գործ անում: Գևորգի օրինակով նա ցույց է տալիս, թե ինչպես են օգնության, ձեռք մեկնելու պերճախոս հավաստիացումները զրոյանում և ըստ էության ոչնչացնում մարդկանց ձգտումները: Մուրացանը ոչ միայն պատմվածքի դիպաշարով է անում դա, այլև պատմվածքի վերջում ուղիղ խոսք է հղում հայ մեծահարուստներին. ահա մի հատված այդ դիմումից. «Դուք ձեր ոգևորության մեջ ճառեր խոսացիք, խոստումներ արիք, ձեր անտեղի գովեստներով խեղճ երիտասարդին փչացրիք, զրկեցիք յուր պաշտոնից, թշվառացրիք ապագան, ուժասպառ մորը լվացքարան ղրկեցիք…»

©«Այբ» կրթական հիմնադրամ 2018

©Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն 2018